ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 51-Լ

«08» 06 2023 թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի N 59 ՀՐԱՄԱՆԻ 12-ՐԴ ԳԼԽՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, ինչպես նաև հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2008 թվականի հունիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության կանոնակարգը սահմանելու մասին» N 59 հրամանի 12-րդ գլխում՝

1) լրացնել 318.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«318.1. Պետական մարմինների պաշտոնատար անձանց, դատախազներին, ՀՀ դատախազության գլխավոր քարտուղարին ուղարկվող փաստաթղթերի վրա գրվում է հասցեատիրոջ պաշտոնի անվանումը, «տիկին/պարոն» դիմելաձևը, անունը և ազգանունը:».

2) 343-րդ կետում «անվան սկզբնատառից» բառերը փոխարինել «անունից» բառով.

3) 440-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«440. Կնիքների և դրոշմակնիքների առկայությունը տարեկան մեկ անգամ ստուգվում է Հայաստանի Հանրապետության դատախազության առաջին բաժնի կողմից, որի մասին զեկուցվում է Հայաստանի Հանրապետության գլխավոր քարտուղարին:»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, Հայաստանի Հանրապետության

գլխավոր դատախազության ավագ դատախազներին և դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին և օգնականներին:

Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ